Հաստատում եմ:
Տնօրենի պաշտոնակատար
Գ. Պապոյան
28.08.2023թ.

2023-2024 ուս. տարի

Դասղեկի թեմատիկ պլանավորում

Դպրոց__________<<Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ

Դասարան_____________4-րդ

Դասղեկ__________ Ա. Սաղաթելյան

ԿՐԹԱ_ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվաընթացքում

1. Ուշադրություն դարձնել դասարանական կոլեկտիվի համախմբմանը:
2. Ապահովել անհատի ձևավորմանը նպաստող, յուրաքանչյուրի անհատականությունը ող-ջունող և ներուժը բացահայտող հոգեբանա- մանկավարժական միջավայր:
3. Ձևավորել բարյացակամ, ներդաշնակ փոխհարաբերություններ սովորողների, սովորողների և մանկավարժների միջև:
4. Ձևավորել առողջ ապրելակերպի վարքագիծ:
5. Դաստիարակել հայրենասիրություն, հարգանք մեծերի հանդեպ:
6. Ի հայտ բերել աշակերտների նախասիրությունները և ընդգրկել նրանց հասարակական

աշխատանքներում:

7. Օգնել աշակերտներին զարգացնելու սեփական կարողություններն ու հմտությունները,ինչը կնպաստի նրանց՝ հետագայում հասարակության մեջ արդյունավետ ինտեգրմանը:

2. Հայեցի դաստիարակություն

Հոգևոր դաստիարակություն

Անհրաժեշտ է ձևավորել անձ, ով գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների , ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը, գիտակցի,որ գիտությունը, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամա-նակակից աշխարհում:

Գեղագիտական դաստիարակություն

Աշակերտների մեջ ձևավորել գեղագիտական ճաշակ: Աշակերտը պետք է կարևորի գե- ղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը: Կազմակերպել էքրս- կուրսիաներ, որոնք կնպաստեն աշակերտների գեղագիտական դաստիարակությանը:

Ռազմա – հայրենասիրական դաստիարակություն

Ձևավորել քաղաքացի, ով հարգի Հայաստանի պետական խորհրդանիշ.-ը, լինի հայրե- նասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրա- ժեշտությունը:

Ֆիզիկական դաստիարակություն

Կազմակերպել աշակերտների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ: Աշակերտը պետք է մշտապես հոգ տանի իր առող- ջության մասին, կարևորի մարմնակրթության դերը:

Աշխատանքային դաստիարակություն

Զևավորել անձ, ով դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածու- թյուն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը:

Բնապահպանական դաստիարակություն

Դաստիարակել սեր հայրենի բնության հանդեպ: Զևավորել անձ, ով գիտակցի բնության պահպանման, շրջակա միջավայրի չաղտոտման կարևորությունը:

Դպրոց – ընտանիք կապը

Սերտ կապ պահպանել ծնողների հետ, նրանց մասնակից դարձնել դպրոցի աշխա- տանքներին: Աշակերտը պետք է գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակու- թյան մեջ, դրսևորի արժանավայել պահվածք, գիտակցի ծնողների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը

-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսում. շաբաթ-ներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակություն	
1	Ինչպես եմ անցկացրել արձակուրդս, ինչպես եմ պատրաստվում սովորել	Դասղեկ աշակերտներ
2	Հակահամաճարակային կանոնների պահպանումը: Իմ իրավունքներին ու պարտականությունները	Դասղեկ աշակերտներ
3	Աշնան գույներն իմ բնակավայրում / էքսկուրսիայի կազմակերպում/	Դասղեկ աշակերտներ
4	Ես և ուրիշները: Իմ վարքը տանը և շրջապատում	Դասղեկ աշակերտներ
5	Ուսուցչի դերն իմ կյանքում : Մարդ, որին կուզեի նմանվել	Դասղեկ աշակերտներ
6	Ընտանիք: Ընտանեկան ջերմ մթնոլորտի ապահովում	Դասղեկ աշակերտներ
7	Ինչպես սովորել միայն լավ գործեր անել: Լսելու կարողություն	Դասղեկ աշակերտներ

8	Ընկերասիրություն: Ով կարող է լինել իսկական ընկեր	Դասղեկ աշակերտներ
9	Աշխատանքը ազնվացնում է մարդուն: Ինչպես հաղթահարել ծուլությունը	Դասղեկ աշակերտներ
10	Դժվարություններ, որոնց ես բախվում եմ	Դասղեկ աշակերտներ
11	Աշակերտների տարրական գործունեությունը կենցաղային իրադրություններում՝ ինքնօգնության և փոխօգնության տարրերը	Դասղեկ աշակերտներ
12	Ինչպես խուսափել հիվանդանալուց	Դասղեկ աշակերտներ
13	Ինչպես պաշտպանվել բնականաղետներից: 1988թ.-ի երկրաշարժի հետևանքները:	Կատարողներ
14	Ամանորյա ջերմ մաղթանքներ և բացիկներ: Դասարանի ձևավորում	Դասղեկ աշակերտներ
15	Ինպես դիմավորել Ամանորը: Ձմեռային արձակուրդի ճիշտ կազմակերպում	Դասղեկ աշակերտներ

	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակություն	
1	Առողջ լինելու համար ինչ է անհրաժեշտ	Դասղեկ աշակերտներ
1	Ուզում եմ ունենալ պետություն, որտեղ…	Դասղեկ աշակերտներ
1	Ես պարտավոր եմ հայ հերոսներից ժառանգած հայրենիքը դարձնել հզոր	Դասղեկ աշակերտներ
1	Իմ մեջ ձևավորված վատ հատկանիշները	Դասղեկ աշակերտներ
2	Գիրքն իմ կյանքում: Որ գրական հերոսին կուզեի նմանվել	Դասղեկ աշակերտներ
2	Եկեք խոսենք հայերեն և անաղարտ պահենք այն	Դասղեկ աշակերտներ
2	Օգտակար և վնասակար սովորություններ: Ուզում եմ, պետք է, կարող եմ	Դասղեկ աշակերտներ
2	Երախտապարտ եմ քեզ, մայրիկ	Դասղեկ աշակերտներ
2	Ինչպես խնամել մազերն ու ատամները: Կոփենք մեր մարմինը	Դասղեկ աշակերտներ
2	Գեղեցիկը մեր պատկերացմամբ: Պատասխանատվության զգացում	Դասղեկ

		աշակերտներ
2	Ճշտապահություն խոսքում և գործում	Դասղեկ աշակերտներ
2	Համերաշխ դասարան: Կարգապահություն	Դասղեկ աշակերտներ
2	Համագործակցություն: Օգնենք միմյանց: Հանդուրժողականություն	Կատարողներ
2	Ինչ է կոնֆլիկտը: Խնդիրներ լուծելու ուղիները: Կարողանալ ընդունել սեփական սխալը	Դասղեկ աշակերտներ
3	Ընդհանուր գործին սեփական ներդրումների դերը	Դասղեկ աշակերտներ
3	Հայոց Ցեղասպանություն: Պատմական ինչ ուղի են անցել հայերը	Դասղեկ աշակերտներ
3	Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել	Դասղեկ աշակերտներ
3	Հայաստանի պաշտպանները երեկ, այսօր և վաղը	Դասղեկ աշակերտներ
3	Ամառային հանձնարարություններ: Արձակուրդի ճիշտկազմակերպում	Դասղեկ աշակերտներ